հեռանում թիկունք։ Թիւրք ներկայացուցչի ասելով՝ թիւրքերն արդէն բոլշեւիկների հետ կնքել են հաշտութիւն, որով մենք պէտք է քաշւենք մինչև Սարըղամիշ՝ յանձնելով թիւրքերին ամբողջ պաշարն ու զէնքը»։

*

Երզնկայի անկումը, լախտի հարւածի պէս, ցնցեց ամենքին։ Վերահաս վտանգը բացայայտ էր։ Այնքա՜ն ճիգով և արիւն-քրտինքով բնակեցւած Թիւրքահայաստանը նորից դատարկւում էր։ Երզնկայից մինչև Վան տեղահան եղած ժողովուրդը՝ դաղթում էր։ փախստականների շարանը սկսել էր հասնել Երևան ու Թիֆլիս։ Նորից՝ աւեր ու թշւառութիւն ամէն կողմ։ Թիւրքահայաստանը մահացու վտանգի առջև։ Աւելին։ թշնամին մօտենում էր Ռուսահայաստանի դռներին։ Եւ ամենքի աչքերը յառած էին Էրզրումին։ Էրզրումը դարձել էր հայութեան յոյսի փարոսը։ Ազգային Խորհրդի և Ապահովութեան Խորհրդի ջանքերը ամբողջապէս ուղղւած էին այդ կողմը։

Բայց իրապէս ի՞նչ էր ներկայացնում այդ ժամանակ Էրզրումը։ Այնտեղ համախմբւած էին հայկական կորպուսի առաջին բրիգադի հետևեալ զօրամասերը։ — Էրզրումի գունդ՝ 2 գումարտակ, 600 սին, Երզնկայի գունդ՝ 3 գումարտակ, 1400 սին, 2 լեռնային մարտկոց 8 թնդանօթով, առաջին հրացանաձիգ գունդը՝ 2 գումարտակ, 500 սին, 4րդ հրացանաձիգ գնդի մէկ գումարտակը 300 սինով, Էրզրումի գումարտակը 300 սին, 3 խումբ կամաւորներ՝ 400 ձիաւոր։ Ընդամենը, ուրեմն, 9 գումարտակ, 3 խումբ՝ 3100 սինով ու 400 ձիաւորով և 2 մարտկոցով՝ 8 թնդանօթով։

Բացի այս ուժերից, Էրզրումի ամրութիւնները ունէին բաւական ուժեղ հրետանի 400 բերդային և դաշտային թնդանօթներով, որոնց մեծագոյն մասը, սակայն, անգործածելի վիճակի մէջ էր՝ լքւած ու թաղւած խորունկ ձիւնի մէջ։ հազիւ մի-երկու տասնեակ թնդանօթներ պահել էին իրենց ռազմունակութիւնը։ Էրզրումի հրետանին վարում էին 40 ռուս սպաներ և 400 զինւորներ, որոնց մարտական ոգին ու բարոյականը այնքան էլ բարձր չէին։ Ռուսական սպայակոյտը փետր։ 12-ին Էրզրումից տեղափոխւել էր Սարըղամիշ և բերդի պաշտպանութիւնն ու զօրքերի հրամանատարութիւնը անցել էր հայերի ձեռքը։

Էրզրումի ամրացւած շրջանի պետ նշանակւել էր Անդրանիկը։ Քաջ հայդուկ, հիանալի խմբապետ, պարտիզանական կռիւների հմուտ վարիչ՝ Անդրանիկը, զօրավարի ուսադիրներ դնելուց յետոյ, մեծ չափով կորցրեց իր հմայքը։ Ուսադիրները չէին արգելում, որ ռուսական բանակի սպաները շարունակէին համարել նրան խմբապետ՝ անձեռնհաս վարելու խոշոր զօրամասեր և բերդի պաշտպանութեան բարդ գործը։ Անդրանիկը ինքն էս, իր հերթին, լաւ չէր զգում իրեն նոր դերում։ ո՛չ խմբապետ էր, ոչ զինւորական։ Խմբապետութիւնից հրաժարւել, զօրավար չէր դարձել։ Այդ պատճառով, մինչև վերջ էլ չկարողացաւ կենտրոնացնել իր ձեռքը բերդի և զօրամասերի ղեկավարութեան գործը։ Այս պարագան քիչ չնպաստեց Էրզրումի արագ խորտակումին։